ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N8

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

10.06.2020թ. ք. Իջևան

Նախագահ՝ Գ. Ավետիսյան
Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան

Խորհրդի նիստին մասնակցում էին գիտախորհրդի բոլոր անդամները:
Բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1. 2019-2020 ուստարվա տնտեսագիտության ֆակուլտետի երկու մասնագիտությունների ավարտական կուրսերի ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների քննարկում/ Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:
2. Բակալավրիատի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման կարգի և հետազոտական բաղադրիչի ներդման քննարկում / Զեկ. Մ.Միքայելյան,Գ. Հովհաննիսյան/:
3. Ֆակուլտետի մասնագիտությունների ուսումնական պլանների քննարկում և հաստատում /2020-2024/ Զեկ. Մ.Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:

1.Լսեցին.- 2019-2020 ուստարվա տնտեսագիտության ֆակուլտետի երկու մասնագիտությունների ավարտական կուրսերի ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների քննարկում/ Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:

Մ. Միքայելյանը նշեց, որ ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները գոհանցնում են, քանի որ գերազանց գնահատական են ստացել հինգ ուսանող, բավարար՝ յոթը, իսկ մնացածը՝ լավ: Բողոքարկման արդյունքում երկու ուսանողի միավոր փոփոխվել է: Այս ցուցանիշը վկայում է այն մասին, որ չնայած հանրապետությունում ԱԻ, նախապես կազմակերպված հեռավար նախապաշտպանության ընթացքում բացահայտվել են թերությունները, շտկվել են բացթողումները: Ավարտական աշխատանքների պաշտպանության ընթացքում ուսանողները լիովին տիրապետում էին իրենց թեմային և կարողանում էին պատշաճ ներկայացնել:

Մ. Միքայելյանը ներկայացրեց նաև ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի առաջարկությունը, որ մինչև ավարտական աշխատանքների թեմաների ընտրությունը անհրաժեշտ է հանդիպել խոշոր կազմակերպությունների և պետական տնտեսական քաղաքականություններ իրականացնող կառույցների պատասխանատուներին՝ վերջիններիս կողմից պահանջված խնդիրների բացահայտման և թեմաների սահմանման համար: Ավարտական աշխատանքների պաշտպանությունից հետո անհրաժեշտ է դրանք ներկայացնել նաև վերոնշյալ կազմակերպությունների և կառույցների շահագրգիռներին:

Անհրաժեշտ է ուսանողներին և դասախոսներին հնարավորինս ներգրավել մակրո և միկրոտնտեսական քաղաքականությունների մշակման մեջ: Մասնավորապես, անհրաժեշտ է, որպեսզի մասնավոր կազմակերպությունների և պետական տնտեսական քաղաքականություններ իրականացնող կառույցների խնդիրների լուծման համար կազմակերպել տնտեսվարող սուբյեկտների հարցումներ

(հատկապես՝ հեռախոսային և առցանց), իրականացնել մաթվերլուծություններ և վարքագծային մոդելավորում:

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ «Սերվիս» կրթական ծրագրի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ավարտական աշխատանքների պաշտպանությունը ընթացավ ԵՊՀ ԻՄ կողմից սահմանված ընթացակարգին համապատասխան:

Ավարտական աշխատանքի թեմաները բազմազան էին և շատերը ունեին կիրառական նշանակություն: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կողմից առաջարկվեց, որ հետագայում էլ կիրառական նշանակության ունեցող թեմաներ հաստատեն, որով և կաջակցեն նաև Տավուշի տարածաշրջանի զբոսաշրջության զարգացմանը:

Նա նշեց նաև, որ ավարտական աշխատանքի պաշտպանությանը մասնակցած շրջանավարտներից երեքը ստացան «գերազանց» (մեկը՝ 18 (տասնութ), երկուսը՝ 20 (քսան)), ութ ուսանող՝ «լավ» և մեկ ուսանող՝ «բավարար»: Բողոքարկումներ չեն եղել:

Արտահայտվեցին.- Ա. Սարիբեկյանը:

Նա նշեց, որ «Տնտեսագիտություն» մասնագիտության ավարտական աշխատանքերի պաշտանության արդյունքները գոհացնող են, քանի որ թեմաները ընտրելուց հետո ուսանողները ուղորդվել են պրակտիկայի այն վայրերը, որտեղ իրենք կարող էին ինքնուրույն կատարել վերլուծություն:

Որոշեցին.- Ֆակուլտետի ըստ մասնագիտությունների 2020թ.-ի ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման (ավարտական աշխատանքների պաշտպանության) արդյունքները ընդունել ի գիտություն:

2. Լսեցին- Բակալավրիատի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման կարգի և հետազոտական բաղադրիչի ներդրման քննարկման մասին: /Զեկ. Մ.Միքայելյան,Գ. Հովհաննիսյան/:

Գ. Ավետիսյանը ներկայացրեց, որ ղեկավարվելով ԵՊՀ ԻՄ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի «Արդիական հետազոտություն և նորարարություն» նպատակի 2.1 խնդրի 4-րդ գործողության իրականացման հանձնառությամբ և ԵՊՀ գիտական խորհրդի N11/2 որոշմամբ/12.03.2020թ./ ՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի բակալավրի կրթական ծրագրերի մասնագիտական մի շարք դասընթացներում ներմուծվում է հետազոտական աշխատանք, որի նպատակն է խթանել ուսանողի անհատական կամ խմբային հետազոտություն կատարելու ունակությունները և նպաստել նրա մասնագիտական հմտությունների զարգացմանը:

Մ. Միքայելյանը նշեց, որ ուսումնական պլաններում տեղի են ունեցել փոփոխություններ՝ներդրվել է հետազոտական բաղադրիչը կուրսային աշխատանքի փոխարեն: Զեկուցողը ներկայացրեց առարկայացանկը, որտեղ ներդրվել է հետազոտական բաղադրիչը:

Մ. Միքայելյանը նշեց, որ 2017-2021 ուսումնական ծրագրով նախատեսվում է Ֆինանսների կառավարում դասընթացի շրջանակում իրականացնել հետազոտական աշխատանք:

2018- 2022 ուսումնական ծրագրում նախատեսվում է հետազոտական բաղադրիչի ներդրումն իրականացնել հետևյալ դասընթացների շրջանակներում Միկրոտնտեսագիտություն, Կորպորատիվ ֆինանսների հիմունքներ/5-րդ կիսամյակ/, Մակրոտնտեսագիտություն/ 6-րդ կիսամյակ/, Ֆինանսների կառավարում / 7-րդ կիսամյակ/:

2019- 2023 ուսումնական ծրագրում նախատեսվում է Վիճակագրություն/4-րդ կիսամյակ/ դասընթացից, Միկրոտնտեսագիտություն, Ֆինանսներ-2 /5-րդ

կիսամյակ/, Մակրոտնտեսագիտություն/ 6-րդ կիսամյակ/, Հանրային ֆինանսներ/ 7-րդ կիսմայակ/:

2020- 2024 ուսումնական ծրագրում ուսանողները հետազոտություն կիրականացնեն Տնտ.տեսություն–1 /1-ին կիասմայակ/, Վիճակագրություն /4-րդ կիսամյակ/ առարկայից, Միկրոտնտեսագիտություն, Ֆինանսներ-2 /5-րդ կիսամյակ/, Մակրոտնտեսագիտություն/ 6-րդ կիսամյակ/, Հանրային ֆինանսներ/ 7-րդ կիսմայակ/:

Մ. Միքայելյանն ավարտելով նշեց, որ հետազոտական բաղադրիչի պատշաճ իրականացումը հիմք կհանդիսանա հետագայում գիտական աշխարհում առավել բանիմաց մասնագետների ներգրավմանը:

Գ. Հովհաննիսյանը արժևորելով հետազոտական բաղադրիչի ներդրումը նշեց, որ այն հնարավորություն է կտա ուսանողին ի սկզբանե ճիշտ ուղիով ընթանա գիտական կյանքում: Այն հնարավորություն կտա հետազոտական աշխատանքի կարևորությունը գիտակցելու, ճիշտ կազմակերպելու և հետագայում ավելի լավ ավարտական աշխատանքներ կատարելու: Նա ևս ներկայացրեց ուսումնական պ;աններում տեղ գտած փոփոխությունները:

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ 2017-2021 թթ ուսպլանում նախատեսված է Գյուղական զբոսաշրջություն /7-րդ կիսամյակ/, Զբոսաշրջությունը և բնության պահպանությունը/ 7-րդ կ/, Ծրագրային զբոսաշրջություն/ 7-րդ կիսամյակ /:

2018-2022 թթ. ուսպլանով նախատեսվում է. Հայաստանի աշխարհագրություն /5-րդ կիսամյակ/, Էքսկուրսիոն գործ / 5-րդ կիսամյակ /, Գյուղական զբոսաշրջություն/ 6-րդ կիսամյակ /, Զբոսաշրջությունը և բնության պահպանությունը/ 6-րդ կիսամյակ /, Հայաստանի բնական և պատմաճարտարապետական հուշ./6-րդ կիսամյակ /:

2019-2023 թթ. ուսպլանում ներառված հետազոտական բաղադրիչներն են. Գիտական հետազոտությունների մեթոդներ /3-րդ կիսամյակ/, Հայաստանի

աշխարհագրություն /5-րդ կիսամյակ/, Էքսկուրսիոն գործ /5-րդ կիսամյակ/, Գյուղական զբոսաշրջություն /6-րդ կիսամյակ/, Զբոսաշրջությունը և բնության պահպանությունը /6-րդ կիսամյակ/, Հայաստանի բնական և պատմաճարտարապետական հուշ. / 6-րդ կիսամյակ /:

2020-2024 թթ ուսպլանով նախատեսվում է հետևյալ հետազոտական բաղադրիչները. Գիտական հետազոտությունների մեթոդներ /3-րդ կիսամյակ/, Հայաստանի աշխարհագրություն /5-րդ կիսամյակ/, Էքսկուրսիոն գործ /5-րդ կիսամյակ/, Գյուղական զբոսաշրջություն /6-րդ կիսամյակ/, Զբոսաշրջությունը և բնության պահպանությունը /6-րդ կիսամյակ/, Հայաստանի բնական և պատմաճարտարապետական հուշ. / 6-րդ կիսամյակ /:

Արտահայտվեցին.- Լ. Մադաթյանը, Ա. Պոտոսյանը:

Ուսանողների անունից Լուիզա Մադաթյանը ներկայացրեց իրենց դիրքորոշումը՝ կապված հետազոտական բաղադրիչի ներդրման մասին: Մասնավորապես նա անհանգստություն հայտնեց, որ հետազոտական բաղադրիչի ներդրումը չորրորդ կուրսում լրացուցիչ ծանրաբեռնվածություն կառաջացնի: Իսկ մնացած կուրսերում այն անհրաժեշտություն է և շատ արդյունավետ կլինի:

Ա. Պոտոսյանը կարևորեց հետազոտական բաղադրիչի ներդրումը և համոզմունք հայտնեց, որ այն կխթանի ուսանողի անհատական, խմբային աշխատանքը, կզարգացնի նրա մասնագիտական հմտությունները: Այն կնպաստի ավարտական աշխատանքի գիտականության բարձրացմանը:

Որոշեցին.- Հաստատել «Ընդհանուր տնտեսագիտություն» և «Տուրիզմի կառավարման և մշակութաբանություն» ամբիոնների ուսումնական պլաններում կատարված փոփոխությունները:

3. Լսեցին.- Ֆակուլտետի մասնագիտությունների ուսումնական պլանների քննարկում և հաստատում /2020-2024/ Զեկ. Մ.Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:

Մ. Միքայելյանը ներկայացրեց 2020-2024 թթ. ուստարիների «Բակալավրիատի ուսումնական պլանը», որը կազմվել է 2019 – 2023 թթ. ուստարվա պլանի հիման վրա, որոշակի փոփոխություններով: Փոփոխությունները կատարվել են դասախոսական անձնակազմի, ուսանողների հետ քննարկումների, բեչմարկինգի, հետազոտական բաղադրիչի ներդրման և «Բակալավրիատի ուսումնական պլան»- ին ներկայացվող նորմատիվների հիման վրա: Նա նշեց, որ այդ փոփոխությունները կբարելավեն ուսման որակը և կնպաստեն ուսանողների հետաքրքրվածությանը դեպի մասնագիտությունը: Մ. Միքայելյանը նշեց նաև, որ մասնագիտական դասընթացներում հետազոտական բաղադրիչին ներդրումը և երկրորդ մասնգիտական պրակտիկան հնարավորություն կտան ձեռք բերել գործնական հմտություններ, ստեղծել տեղեկատվական բազա և կողմնորոշվել նախադիպլոմային մասնագիտական պրակտիկայի վայրի ընտրության հարցում:

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ «Զբոսաշրջություն» մասնագիտության 2020-2024 ուսումնական պլանը ձևավորվել է 2019-2023 ուսումնական պլանի հիման վրա: Նա ևս նշեց հետազոտական բաղադրիչի ներդրման մասին, հավելելով այն կբարձրացնի ուսանողների ինքնուրույն հետազոտական աշխատանքների կատարման արդյունավետությունը: Նա ներկայացրեց կատարված փոփոխություններ որոշ առարկաների գնահատման ձևում:

Որոշեցին - Հաստատել ֆակուլտետի «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» մասնագիտությունների 2020-2024 ուստարվա ուսումնական պլանների նախագծերը և ներկայացնել մասնաճյուղի գիտական խորհրդի հաստատմանը:

Նախագահ՝ *Գ. Ավետիսյան*
Քարտուղար՝ *Ա. Ալեքսանյան*